

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-19/24-I/IGIC

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

29 հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Կարեն Գազիկի Գրիգորյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 286 981 284 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, Ծրագրի առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 286 981 284 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա


Կազմակերպություն

ՀՀ ԳԱԱ «Ընդհանուր և անօրգանական քիմիայի
ինստիտուտ» ՊՈԱԿ

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24
Հ/հ՝ 900011024115
ՀՎՀՀ՝ 00005673
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

Երևան, Արղության շենք10, 2-րդ նրբանցք
Հ/հ՝ 900018005703
ՀՎՀՀ՝ 00007282
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝




(ստորագրություն)

ԱՇՈՏ ԱՆՐՈՒԻ ՍԱՂՅԱՆ



Ծրագրի գիտական ղեկավար



(ստորագրություն)

Կազմակերպության տնօրեն՝



(ստորագրություն)

Կարեն Գագիկի Գրիգորյան



Գրիգորյան Կարեն Գագիկի

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**

Մենք՝ ներքուտորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սադյանը և Կազմակերպության տնօրեն Կարեն Գազիկի Գրիգորյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 հունվարի 2024թ. N 1-19/24-1/IGIC պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 286 981 284 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:


Ակադեմիա

Նախագահ՝



(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱԴՅԱՆ



Կազմակերպություն

տնօրեն՝



(ստորագրություն)


Կարեն Գազիկի Գրիգորյան



ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի


Ակնկալվող արդյունք	Քանակ
ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող պարբերականներում հոդվածներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների՝	6
ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներում հոդվածներ՝	8
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում՝ հոդվածներ՝	10
Այլ պարբերականներում հոդվածներ/հոդված ժողովածուի մեջ՝	10
Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություններ, գրքեր, հոդվածներ՝	0
Գրքեր, մենագրություններ՝	1
Գիտաժողովի նյութեր՝	12
Արտոնագրեր՝	4

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

Կարեն Գագիկի Գրիգորյան

Կազմակերպության գիտքարտուղար՝


(ստորագրություն)

Մանուկյան Գոհարիկ Գաբրիելի




ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ


Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	269 920 704	53 984 140	67 480 176	67 480 176	80 976 212
2.	տնտեսական ծախսեր՝	10 254 000	2 050 800	2 563 500	2 563 500	3 076 200
3.	այլ ծախսեր՝	6 806 580	1 361 316	1 701 645	1 701 645	2 041 974
ԸՆԴԱՄԵՆՆՆՆԸ՝		286 981 284	57 396 256	71 745 321	71 745 321	86 094 386

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

Կարեն Գագիկի Գրիգորյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


(ստորագրություն)

Մարիամ Մարտիրոսի Բոջարյան




ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

«Ղ դրամ»


Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	10 254 000
1.	էլեկտրաէներգիայի ծառայություն	8 000 000
2.	գազի ծառայություն	0
3.	ջրամատակարարման ծառայություն	1 000 000
4.	կապի ծառայություն	750 000
5.	ադրահանություն	144 000
6.	Դեռատիզացիա	360 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	6 806 580
1.	Սարք, սարքավորում	500 000
2.	Գույք	250 000
3.	Նյութեր	1 500 000
4.	Գործուղում	600 000
5.	Այլ ծախսեր	3 956 580

Կազմակերպության տնօրեն՝


 (ստորագրություն)

Կարեն Գազիկի Գրիգորյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

Մարիամ Մարտինի Քոչարյան



ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)

B - ամիսների քանակ

C - աշխատաժամանակի ռեժիմ

D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)

E - գումարային

ՀՀ դրամ


ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Գրիգորյան Կարեն Գագիկի	տնօրեն	445 000	12	հիմնական	40	5 340 000
Կնյազյան Նիկոլայ Բաբկենի	փոխտնօրեն գիտական գծով	345 000	12	հիմնական	40	4 140 000
Մարգարյան Դավիթ Հենրիխի	փոխտնօրեն	200 000	12	հիմնական	40	2 400 000
Մանուկյան Գոհարիկ Գաբրիելի	գիտական քարտուղար	295 000	12	հիմնական	40	3 540 000
Քոչարյան Մարիամ Մարտինի	գլխավոր հաշվապահ	255 000	12	հիմնական	40	3 060 000
Մախյան Համեստ Արամախի	ավագ հաշվապահ	153 000	12	հիմնական	40	1 836 000
Աբրահամյան Ժաննա Մարտունի	ընդհանուր բաժնի պետ	175 000	12	հիմնական	40	2 100 000
Արկյան Ռոմիկ Զորկինի	ինժեներ, 1-ին բաժնի վարիչ	119 600	12	հիմնական	40	1 435 200
Աբրահամյան Աշոտ Վազգենի (համատեղող)	Իրավախորհրդատու	126 000	12	համատեղություն	20	1 512 000
Սահակյան Մարիետա Նավասարդի	գրադարանի վարիչ	104 600	12	հիմնական	40	1 255 200
Գևորգյան Սուրեն Արտուրի	համակարգ. ծառայութ. ղեկավար	55 150	12	համատեղություն	20	661 800
Կիրակոսյան Մանվել Մկրտչի	Փականագործ	109 600	12	հիմնական	40	1 315 200
Յավրյան Արմեն Հուսիկի	վարպետ	109 600	12	հիմնական	40	1 315 200
Պապյան Լիլիթ Ալբերտի	հավաքարար	109 000	12	հիմնական	40	1 308 000
Այվազյան Մանիշակ Հայկազի	հավաքարար	54 500	12	համատեղություն	20	654 000
Հարությունյան Սամվել Հարությունի	էլեկտրիկ	104 600	12	հիմնական	40	1 255 200
Գիտական անձնակազմ						
Լաբորատորիա Հետերոպոլիմիացությունների, ցրված և հազվագյուտ տարրերի քիմիայի և անալիզի լաբորատորիա laboratory of heteropolycompounds, chemistry and analysis of rare and trace elements						
Հայրիյան Էլզա Քրիստափորի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Միրզոյան Լաուրա Անտոնի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Կարապետյան Արմինե Արամայիսի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Բաղդասարյան Լիլիթ Սիմոնի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Օհանյան Նաթելլա Ալեքսանդրի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016

<p style="text-align: center;">Լաբորատորիա Նանոկոմպոզիտային նյութերի և լցունների laboratory of nanocomposite materials and fillers</p>						
Կոստանյան Արամ Կոստանի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Ավագյան Անդրանիկ Նիկոլայի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Կարախանյան Գոհար Սուրենի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Մանուկյան Հասմիկ Գառնուշի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Սարգսյան Կարինե Արարատի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Հովհաննիսյան Զենֆիրա Արտավազդի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
<p style="text-align: center;">Լաբորատորիա Անօրգանական կոմպոզիտային նյութերի քիմիայի և տեխնոլոգիայի լաբորատորիա Laboratory of Chemistry and Technology of Inorganic Composite Materials</p>						
Գուրգենյան Նինել Վաղինակի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Կոստանյան Մելիդա Ֆրունզեի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Գրիգորյան Աիդա Եղիազարի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Մարտիրոսյան Աննա Վալերիկի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Վարդանյան Նվարդ Կարապետի	Ավագ լաբորանտ	156 091	12	հիմնական	40	1 873 092
Եգանյան Գաբրիել Ռաֆայելի	Լաբորանտ	29 928	12	հիմնական	10	359 136
Կիրակոսյան Արեն Արկադի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
<p style="text-align: center;">Լաբորատորիա "Ապակու և սիտալների քիմիայի և տեխնոլոգիայի" լաբորատորիա Glass, glass-ceramics and technology" laboratory</p>						
Կնյազյան Նիկոլայ Բաբկենի	Ղեկավար	224 876	12	ներքին համատեղություն	20	2 698 512
Կումկումաջյան Ելենա Վիկտորի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Գասպարյան Լուսինե Ալբերտի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Գրիգորյան Տաթևիկ Վասակի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Ազատյան Տատյանա Սերգեյի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Թորոյան Վահան Պետրոսի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Գալոյան Կարինե Կարլենի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Սահարունյան Ալիսա Սերգեյի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Ապրեսյան Լեյլի Պավելի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Խաչատրյան Ազատուհի Արմենակի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
<p style="text-align: center;">Լաբորատորիա «Հիմնային ապարների ֆիզիկաքիմիական հետազոտությունների և մշակման» լաբորատորիա Laboratory of "Physicochemical research and basic rocks processing"</p>						
Զուլումյան Նշան Հովհաննեսի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Ղազանջյան Աիդա Մարտիրոսի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Սեմերջյան Հովհաննես Սարգիսի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Ազիզբեկյան Լուսինե Արմեն	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
Պետրոսյան Ինեսա Արթուրի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Սարկեզիյան Վերժինե Ազիզի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
<p style="text-align: center;">Լաբորատորիա</p>						

Այլումասիլիկատային լեռնային ապարների վերամշակման և անօրգանական պոլիմերներ: Laboratory for processing aluminosilicate rocks and inorganic polymersh''						
Բաղրամյան Վոլոդյա Վազգենի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Սարգսյան Անահիտ Ալեքսանի	Առաջատար գիտաշխատող	419 989	12	հիմնական	40	5 039 868
Ասլանյան Աիդա Մարտինի	Գիտաշխատող	172 626	12	հիմնական	30	2 071 512
Ղազարյան Ալիսա Աղաբեկի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Քոչարյան Լիդա Կամոյի	Ավագ լաբորանտ	117 068	12	հիմնական	30	1 404 816
Պետրոսյան Ագապի Արթուրի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Լաբորատորիա Հետերաֆազ քիմիական պրոցեսների բազային գիտահետազոտական լաբորատորիա The basic scientific-research laboratory of heterophase chemical processes						
Մանթաշյան Կորյուն Ադոլֆի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Աբրահամյան Մերի Մարտինի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Մանթաշյան Ստելլա Գեորգիի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Զապրոսյան Արթուր Վլադիմիրի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Դոնոյան Արուսյակ Թորգոմի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Եսայան Արսեն Ռազմիկի	Ավագ լաբորանտ	156 091	12	հիմնական	40	1 873 092
Լաբորատորիա Այլումինապարունակող բնական հումքի և արտադրական թափոնների վերամշակման Processing of aluminum-containing natural raw materials and industrial waste						
Նազարյան Էդիտա Մուշեղի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Առաքելյան Ալեքսանդր Մախայելի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Աղամյան Էլլադա Սմբատի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Առուստամյան Աննետա Գեորգիի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Յայլոյան Ստեփան Միխայիլի	Ավագ գիտաշխատող	150 138	12	հիմնական	20	1 801 656
Հակոբյան Հասմիկ Արտաշեսի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Լաբորատորիա Հանքային աղերի լաբորատորիա Mineral salt laboratory						
Գրիգորյան Կարեն Գագիկի	Ղեկավար	224 876	12	ներքին համատեղություն	20	2 698 512
Բագինովա Լուսյա Գեորգիի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Հարությունյան Գալինա Արտեմի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Հայրապետյան Սուրեն Մուշեղի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Խաչատրյան Աննա Ալբերտի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Ազնաուրյան Այա Նիկողոսի	Գիտաշխատող	115 084	12	հիմնական	20	1 381 008
Էդիլյան Կարեն Նորայրի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Խումբ «Մագնիսաօպտիկական նյութերի քիմիայի և տեխնոլոգիայի» Chemistry and technology of magneto-optical materials						
Պողոսյան Մանուկ Արարատի	Ղեկավար	349 881	12	հիմնական	40	4 198 572
Սարգսյան Մարինե Սեմյոնի	Ավագ լաբորանտ	156 091	12	հիմնական	40	1 873 092
Լաբորատորիա Հազվագյուտ և ցրված տարրերի քիմիայի և տեխնոլոգիայի լաբորատորիա Laboratory of Chemistry and technology of rare						


and dispersed elements գյուտ և ցրված տարրերի քիմիայի և տեխնոլոգիայի լաբորատորիա						
Դավիթյան Կարեն Հենրիկի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Հարությունյան Սիրանուշ Աշոտի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Սաֆարյան Տաթևիկ Նիկոլայի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Հակոբյան Ասյա Ռաֆայելի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Դավիթյան Արթուր Կարենի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Խումբ Ինտենսիվ տեխնոլոգիաների խումբ						
Թաթարյան Աշոտ Ալբերտի	Ղեկավար	174 941	12	հիմնական	20	2 099 292
Հարությունյան Վեներա Ռաֆիկի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Լաբորատորիա Ադսորբենտների և լցանյութերի լաբորատորիա Laboratory of Adsorbents and Fillers						
Մարտիրոսյան Վարդան Գևորգի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Սարկիզովա Յուլիա Սարկիզի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Ղազինյան Անահիտ Աբելի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Հակոբյան Նինա Հովհաննեսի	Ավագ լաբորանտ	156 091	12	հիմնական	40	1 873 092
Լաբորատորիա «ՀԱԱ ԸԱՔԻ Երկրաքիմիայի լաբորատորիա Laboratory of Geochemistry»						
Հարությունյան Լևոն Վարդանի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Փաշայան Ռոմելա Արտավազի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Ղազարյան Ռաֆայել Լևոնի	Լաբորանտ	119 714	12	հիմնական	40	1 436 568
Մելիքջանյան Հասմիկ Միշայի	Լաբորանտ	119 714	12	հիմնական	40	1 436 568
Մխիթարյան Անահիտ Ալբերտի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Լաբորատորիա «Հիմնային ապարներից կիրառական նյութերի ստացման և ուսումնասիրության» «The syntheses of materials having practical importance from ultrabasic rocks and their investigation»						
Բեգարյան Հայկ Ալեքսանի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Իսահակյան Աննա Ռաֆայելի	Առաջատար գիտաշխատող	419 989	12	հիմնական	40	5 039 868
Թերզյան Աննա Միհրանի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Մելիքջանյան Ստելլա Արթուրի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Ստեփանյան Վարդանուշ Գևորգ	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						0
Ընդհանուր գումար՝						269 920 704

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

Կարեն Գագիկի Գրիգորյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար՝


(ստորագրություն)



ԱՈՍՁԱԴՐԱՆՔ

«ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՅՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Ֆունկցիոնալ նշանակության նոր նյութերի սինթեզը, հատկությունների ուսումնասիրությունը և շահավետ տեխնոլոգիաների մշակումը:

Նանոչափի նյութերի և դրանց հիմքով նանոկոմպոզիտների ստացումը և ուսումնասիրությունը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Աշխատանքը կատարվելու է ըստ օրացուցային պլանի և նշված ժամկետներում կներկայացվեն հաշվետվություններ: Եթե որևէ աշխատանք ըստ օրացուցային պլանի չի կատարվում օբյեկտիվ պատճառներով, ապա անհրաժեշտ է տեղեկացնել պատվիրատուին՝ հիմնավորելով այն: Այս դեպքում չկատարված աշխատանքը անհրաժեշտ է փոխարինել ընդհանուր խնդրի հետ տրամաբանորեն կապված նույն ծավալով մեկ այլ փուլի:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

ՀՀ ԳԱԱ Մ. Գ. Մանվելյանի անվան Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի հետազոտությունների հիմնական ուղղությունները կապված են հանրապետության ոչ մետաղական և դժվարահալ հանքանյութերի, բազմամետաղային հանածոների և արտադրական թափոնների համալիր վերամշակման, տարրերի բարձր կորզմամբ նոր տեխնոլոգիաների մշակման, բարելավված հատկություններով նոր բաղադրության բյուրեղային, ամորֆ, ապակեբյուրեղային նյութերի, նանոչափ մասնիկների ստացման տեսական հիմունքների մշակման, նոր հատկություններով կոմպոզիտների ստացման և ներդրման, հանքային շրջանների և հանքային դաշտերի բնապահպանական և մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի երկրաքիմիական համալիր որոնումների մեթոդոլոգիայի մշակման հետ:

Հանրապետության տնտեսության և գիտության զարգացման համար բարելավված հատկություններ ունեցող ֆունկցիոնալ նշանակության նյութերի, նանոչափ մասնիկների, բյուրեղային և ապակե կիսահաղորդիչների, մագնիսաօպտիկական նյութերի, ջերմա կայուն

կերամիկայի և դրանց հիման վրա կոմպոզիտների ստացումն ու տեխնոլոգիաների մշակումը արդիական և հեռանկարային խնդիր է: Այն նաև գերակայուն է, որը պայմանավորված է տեղական սիլիկատային և բազմամետաղ հանքատեսակների հարուստ պաշարներով, նրանց համալիր մշակման ինտենսիվ նոր տեխնոլոգիաների, որակապես նոր վիճակում գտնվող միկրոկառուցվածքային մասնիկների, նանոկոմպոզիտների մշակման անհրաժեշտությամբ և նրանց կիրառմամբ զարգացող նոր գիտատեխնիկական ուղղություններում և արտադրությունում: Ջարգացնել և խորացնել տեսական նշանակություն ունեցող նոր գիտական ուղղություններ և նոր տեխնոլոգիաներ՝

- Ուղղորդված և նանոկառուցվածքավորված բյուրեղացման պրոցեսի ուսումնասիրությունն այլումաբորոսիլիկատային օքսիֆտորիդային ապակիներում, թափանցիկ օպտիկական ակտիվ ապակեկերամիկական ու այլումինատային կապակցող նյութերի մշակում:
- Բարձր ջերմաստիճանային կապակցող նյութերի ստացում և հետազոտում:
- Նոր հատկություններով նանոկոմպոզիտային նյութերի ստացման տեսական և տեխնոլոգիական հիմունքների մշակում:
- կերամիկական կոմպոզիցիոն նյութերի սինթեզ և տեխնոլոգիայի մշակում $RnOm - B2O3 - SiO2$ (որտեղ R- Mg, Ba, Ca, Al, Zn) համակարգերի դյուրահալ ապակիների հիման վրա :
- Քիմիապես ակտիվ հիդրոսիլիկատներով և II խմբի մետաղների միացություններով ֆունկցիոնալ նշանակության մի շարք սիլիկատային միացությունների սինթեզ և անցումային մետաղների ներմուծմամբ լյումինեսցենտային նյութերի ստացում
- Վանադատային պոլիօքսիմետաղների ցածրամոլեկուլային, նոր β միջուկային ձևերի սինթեզը, նրանց հատկությունների ուսումնասիրությունը և կիրառության հնարավորությունների բացահայտումը
- ՄԱ մեթոդով այլումինի և իտրիումի լուծելի աղերից իտրիումի այլումինատների ստացում $Y_2O_3:Al_2O_3 = 2:1, 1:1$ և $3:5$ հարաբերությամբ: ՄԱ սինթեզի մեխանիզմի ուսումնասիրություն և ջերմամշակման օպտիմալ պայմանների մշակում: Իտրիումի այլումինատների կառուցվածքագոյացման վրա ջերմամշակման եղանակների ազդեցության հետազոտություն: Ստացված նյութերի ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրություն:
- Հավելանյութերի ազդեցության ուսումնասիրությունը Հայաստանի հրաբխային և նստվածքային ապարներից ոչ ավտոկլավային, հիդրոքիմիական եղանակով կալցիումի հիդրոսիլիկատների ստացման ընթացքում:
- Ֆերոմագնիսական և մագնիսաօպտիկական հատկություններով օժտված ֆոսֆատային հիմքով ապակիզոյացնող համակարգերի բացահայտում, նրանց ֆիզիկա-քիմիական և մագնիսական հատկությունների ուսումնասիրում:

- Ռադիացիոն կայուն կոմպոզիտային նյութերի, այդ թվում շինանյութերի մշակում:
- Հայաստանի մետաղական օքսիդացած և խառը հանքանյութերի վերամշակման ու կորզման տեսական և էկոլոգիապես պաշտպանված տեխնոլոգիական հիմունքների մշակումը:
- Հանքային ապառների (բենտոնիտ, ցեոլիտ, դիատոմիտ, հիդրոսիլիկատներ) ու կորիզային հումքի ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրությունը և դրանց հիմքով սորբենտների ու իոնափոխիչների ստացումը:
- Նոր հետերաֆազ ռադիկալաշղթայական քիմիական փոխարկման պրոցեսների մշակում և կարևոր հատկություններով ու բնութագրերով արժեքավոր նյութերի ստացում:
- ՀՀ Հանքային շրջանների և դաշտերի էկոլոգիաերկրաքիմիական և բնապահպանական գնահատում

Կազմակերպության տնօրեն՝



(ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)
(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

(ստորագրություն)

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ
 ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ
 ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ» ծրագրի

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
	Նոր տեխնոլոգիաների մշակում, ֆուկցիոնալ նշանակության նոր նյութերի ստացում Երկրաքիմիական հետազոտություններ	Նոր նյութերի սինթեզ, հատկությունների և կառուցվածքի ուսումնասիրություն	Փորձարկումներ, Ֆիզ-քիմ հատկությունների ուսումնասիրում	1-ին եռամսյակ
	Տեղական հումքից նանոկառուցվածքային նյութերի ստացում և ուսումնասիրություն Կապարային օքսիդացած հանքանյութերի կորզման տեսական հիմունքների մշակում:	Սինթեզ, հատկությունների ուսումնասիրություն	Համալիր վերամշակում	2-րդ եռամսյակ
	Բաց համակարգերում ֆազային դիագրամների պինդ լուծույթների առաջացման, ֆազերի բյուրեղացման ընթացքի հետազոտություն: Ամորֆ և բյուրեղային նյութերի փոխարկումների տեսական հիմունքների և օրինաչափությունների բացահայտում:	Տեսական և փորձնական ուսումնասիրություններ	Փորձարկումներ, Ֆիզ-քիմ հատկությունների ուսումնասիրում, ՌՖԱ	3-րդ եռամսյակ
	Նյութերի ստացման նոր եղանակների մշակում: Հրաբոլային ապարների թափոններից կոնստրուկցիոն նյութերի մշակում միկրոալիքային սինթեզի եղանակով քիմիապես ակտիվ հիդրոսիլիկատներով և II խմբի մետաղների միացություններով ֆունկցիոնալ նշանակության մի շարք սիլիկատային միացությունների սինթեզ և անցումային մետաղների ներմուծմամբ լյումինեսցենտային նյութերի ստացում:	Սինթեզ, հատկությունների ուսումնասիրում Սինթեզ, հատկությունների ուսումնասիրում,	Ֆիզ-քիմ հատկությունների ուսումնասիրում Նմուշների լաբորատոր փորձարկումներ	4-րդ եռամսյակ

Կազմակերպության տնօրեն՝ _____

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

